ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27.02.2020թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ.Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ.Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«ՏՆՄ» ՍՊԸ
2	«Վարբաղ» ՍՊԸ
3	«Ալեոտռ» ՍՊԸ
4	«Բիգ Էներգո» ՍՊԸ
5	«Ռեդինետ» ՓԲԸ
6	«Սամսոն Գասպարյան» ՍՊԸ
7	«Սպեցմաշ» ՍՊԸ
8	«Յունիմայն» ՍՊԸ
9	«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ **«Յունիմայն» ՍՊԸ-ի, «ՏՆՄ» ՍՊԸ, «Սպեցմաշ» ՍՊԸ և Ռեդինետ» ՓԲԸ-ի** ներկայացրած հայտերի.

«Յունիմայն» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1 ին, 2 րդ և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ «ՊՆ ներկայացուցչի ներկայությամբ տեղում կատարել փորձարկում»:

«ՏՆՄ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) «Պատվիրատուի անվանումը» տողում նշված էր «ՀԱԷԿ» ՓԲԸ, մինչդեռ անհրաժեշտ էր նշել ՀՀ պաշտպանության նախարարությունը:

«Սպեցմաշ» ՍՊԸ կողմից ներկայացված մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիում (Հավելված N 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

1-ին չափաբաժնի՝ Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 40 Կվտ) ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալը՝

Դիզել գեներատոր՝ 40 Կվտ անվանական հզորության, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է՝ 48 Կվտ անվանական հզորության:

8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, վառելիքի ծախսը 75% բեռնվածության դեպքում 9 լիտրից ոչ ավել, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 14 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, վառելիքի ծախսը 75% բեռնվածության դեպքում 9.5 լիտր,

2-րդ չափաբաժնի՝ Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 60Կվտ) ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալը՝

Դիզել գեներատոր՝ 60 Կվտ անվանական հզորության, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է՝ 68 Կվտ անվանական հզորության,

8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով վառելիքի ծախսը 75% բեռնվածության դեպքում 12 լիտրից ոչ ավել, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 10.6 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, վառելիքի ծախսը 75% բեռնվածության դեպքում 14 լիտր, վառելիքի ծախսը 45Կվտ բեռնվածության դեպքում 12 լիտր:

3-րդ չափաբաժնի՝ Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 96-110Կվտ) ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալը՝

-8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 9.3 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1 ին, 2 րդ և 3 րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ «ՊՆ ներկայացուցչի ներկայությամբ տեղում կատարել փորձարկում»,

- 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների մասով մասնակիցը առաջարկել է՝ երաշխիքային սպասարկման ժամկետը 2 տարուց ոչ պակաս կամ 500 մոտո/ժամ SAE 15W40/10W30 տեսակի յուղի օգտագործման, սակայն ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ երաշխիքային սպասարկման ժամկետը 2 տարուց ոչ պակաս կամ 500 մոտո/ժամ առանց որևէ պայմանի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ **28.02.2020թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեց **«Յունիմայն» ՍՊԸ-ին, «ՏՆՄ» ՍՊԸ-ին, «Սպեցմաշ» ՍՊԸ-ին և Ռեդինետ» ՓԲԸ-ին**՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

06.03.2020թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ **«Յունիմայն» ՍՊԸ-ն, «ՏՆՄ» ՍՊԸ-ն և Ռեդինետ» ՓԲԸ-ն** սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանություններ, **իսկ «Սպեցմաշ» ՍՊԸ-ն** արձանագրված անհամապատասխանությունները շտկել էր մասամբ, մասնավորապես չէր շտկվել հետևյալը՝

1-ին չափաբաժնի՝ Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 40 Կվտ) ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել էր 8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 14 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով:

2-րդ չափաբաժնի՝ Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 60Կվտ) ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել էր 8 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 10.6 ժամվա անընդմեջ վառելիքի պաշարի հաշվարկով:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի **42**-րդ կետ՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Սպեցմաշ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

2.5 Քանի որ «Սպեցմաշ» ՍՊԸ ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում: Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի **45**-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«Սպեցմաշ» ՍՊԸ-ի** տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ տվյալ մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Հ/մ	Քանակ	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Մասնակիցներ	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 40 Կվտ)	հատ	1	4,000,000	ՏՆՄ ՍՊԸ	2,430,000	270,000	540,000.00	3,240,000
					Վարբադ ՍՊԸ	2,505,000	200,000	541,000.00	3,246,000
					Սամսոն Գասպարյան ՍՊԸ	2,759,273	275,927	607,040.00	3,642,240.00
					Ռեդինետ ՓԲԸ	2,690,250	474,750	633,000.00	3,798,000.00
					Ցունիմայն ՍՊԸ	3,100,000	150,000	650,000.00	3,900,000
					Սպեցմաշ ՍՊԸ	3,835,000	615,000	890,000.00	5,340,000
2	Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 60Կվտ)	հատ	1	4,500,000	Վարբադ ՍՊԸ	2,870,000	200,000	614,000.00	3,684,000.00
					ՏՆՄ ՍՊԸ	2,880,000	320,000	640,000.00	3,840,000.00
					Ռեդինետ ՓԲԸ	3,043,000	537,000	716,000.00	4,296,000.00
					Սամսոն Գասպարյան ՍՊԸ	3,265,727	325,673	716,480.00	4,298,880.00
					Ցունիմայն ՍՊԸ	3,460,000	200,000	732,000.00	4,392,000.00
					Սպեցմաշ ՍՊԸ	4,292,000	688,000	996,000.00	5,976,000.00
					Բիգ Էներգո ՍՊԸ	5,985,000	598,500	1,316,700.00	7,900,200.00
3	Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 96 110Կվտ)	հատ	1	6,000,000	ՏՆՄ ՍՊԸ	3,195,000	355,000	710,000.00	4,260,000.00
					Ալեռտո ՍՊԸ	3,357,500	300,000	731,500.00	4,389,000.00
					Սամսոն Գասպարյան ՍՊԸ	3,978,786	397,879	875,333.00	5,251,998.00
					Ռեդինետ ՓԲԸ	3,894,700	687,300	916,400.00	5,498,400.00
					ԿՌ Պրոջեկտս ՍՊԸ	4,470,000	435,833	981,166.67	5,887,000.00
					Ցունիմայն ՍՊԸ	4,758,300	200,000	991,660.00	5,949,960.00
					Սպեցմաշ ՍՊԸ	4,300,000	690,000	998,000.00	5,988,000.00
4	Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Տրանսֆորմատոր 10/0.4 կվտ (380/36))	հատ	20	80,000	-	-		-	

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 **10.03.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) **«ՏՆՄ» ՍՊԸ**-ին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,

2) **«Վարբադ» ՍՊԸ**-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10»** ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ.Թազայան)

6.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ. Թազայան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մոսդայան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնահատող Թ.Ստեփանյան

Գնումները համակարգող Լ. Թազայան